№ 171 ՀԻՆԳՇԱԲԹԻ, 29 ՕԳՈՍՏՈՍԻ

1918
ԳԱՌԱՍՈՒՆԵՍԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ, 29 ՕԳՈՍՏՈՍԻ № 171

Սեպտեմբերի 1-ից մինչև տարվա վերջ՝
Գաւառում —16 ր., արտասահման— 60 ր.
Թիֆլիսում ամսական 10 ռուբլի։
Առանձին համարները Թիֆլիսում և գաւառներում 60 կ., երկաթուղային կայարաններում 70 կոպ.։

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Tiflis. Rédaction „Mschak"
Соломоновская, 21.

Խմբագրատան տելեֆոն № 2—53

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴՐԻ ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—8 (բացի կիրակի և տօն օրերից)
Ձեռագրութիւնները չեն տրւում։
Շրջանառութիւնները կատարւում են միայն Գրիգորեան իւրաքանչիւր ամսաթիւին 50—80 կոպ., Գուլիսեանց դուռը՝ 60—40 կոպ.։
Հասցէն փոխելու համար պիտի ուղարկել թէ հին հասցէն և թէ 1 ռուբլի


# ՄՇԱԿ

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ է (պայմանական) 1918 թ. համար՝

| Սեպտեմբերի 1-ից մինչև տարվայ վերջը | | երեք ամիսը | Ամսական |
|---|---|---|---|
| ԹԻՖԼԻՍՈՒՄ | 30 ր. | 25 ր. | 10 ր. |
| ԳԱՒԱՌՈՒՄ՝ | 16 ր. | 12 ր. | 4 ր. |
| ԱՐՏԱՍԱՀՄԱՆ՝ | 60 ր. | 45 ր. | 15 ր. |

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով։ Յայտարարութիւնների համար պէտք է վճարել՝ Կովկասում—առաջին երեսի վրա տողատեղին (պէտիտ) 30 կ., վերջին երեսի վրա 30 կոպէկ։ Կովկասից դուրս՝ 1 երեսի վրա 60 կ., վերջին երեսի վրա 40 կոպէկ։ Մահագրերի (траурныя) համար՝ 20 ռուբ.։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 1 ռուբլի։


Վարժուհի Գէորգեան՝ զաւակների հետ միասին՝ և Ռուբէն Կոստանեան Էդիլեանցները խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին՝ առաջինների իրաց թանգագին ամուսնու և հօր, իսկ վերջինն իր սիրելի եղբօր՝

**Տիգրան Կոստանդինեան Էդիլեանցի**

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ՝ ծանր հիւանդութիւնից յետոյ՝ օգոստոսի 24-ին, գիշ. ժամը 12 ին։ Հոգեհանգիստը Թանգոյեան ս. Աստուածածին եկեղեցում չորեքշաբթի, օգոստ. 28 ին, երեկ. ժամը 8 ին։ Մարմնի յուղարկաւորութիւնը նոյն եկեղեցուց հինգշաբթի, օգոստ. 29 ին, պատարագից յետոյ։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատունը։ 739 2—2

Սաքիս Կարապետեան Գալաթանը իր ընտանեօք խորին կսկիծով յայտնում է բարեկամներին և ընկերներին իր սիրելի և թանգագին քեռորդու՝ Ղազախեցիների Հայրենակցական Միութեան անդամ

**Տիգրան Կոստանդինեան Էդիլեանի**

մահը, որ տեղի ունեցաւ Արամեանցի հիւանդանոցում ասելս 24 ի՝ գիշերվայ ժամը 12-ին։ Յուղարկաւորութիւնը և թաղումը այսօր, հինգշաբթի, առաւօտեան ժամը 10-ին Թանգոյեան ս. Աստուածածին եկեղեցուց, պատարագից յետոյ, դէպի Խօջիվանքի գերեզմանատունը։ 734 1—1


## Հայկական Ակումբ

Հաստատուն Աւագների Խորհրդի որոշման, կիրակի, սեպտեմբերի 1-ին, առաւ. ժ. 11 ին նշանակում է Ակումբի անդամների

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**

Զբաղմունքի առարկաներն են՝
1. Ծառայողների մասին։
2. Ներքին շէնքի մասին։
3. Կանոնդրատ գրված անձերի քննարկութիւն։
4. Ընթացիկ հարցեր։ (2.) առ. 731. 2—3

Առաջիկայ կիրակի օրը լոյս է տեսնելու
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՕՐԳԱՆ

# ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ

ՕՐԱԹԵՐԹԸ

Բացված է բաժանորդագրութիւն. ամսավճարն է 8 ր., իւրաքանչիւր համարը՝ 50 կ.։ Խմբագրութիւնը և գրասենեակը (Գոլովինակի պր., 25) բաց է ամեն օր բացի կիրակի և տօն օրերից առ. ժամը 10—2 և 6—8։ 1—1
առ. 735

## ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—o—

### ՅԱՆՑԱԳԱՐՏ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ*)

Եւ որովհետև ազգերի պատմութիւնը դասակարգերի պատմութիւն է. և որովհետև իւրաքանչիւր մի յեղափոխութեան գլխաւոր նեցուկը, նրա ողնաշարը անհրաժեշտօրէն կազմում է որևէ դասակարգ. և որովհետև ազգերի պատմութեան մէջ անհնարին է գտնել որևէ շատ թէ քիչ նշանաւոր շարժում, որը իր վրա չը կրէր դասակարգային կնիք, ապա նշանակում է՝ Թիւրքահայ որևէ շատ թէ քիչ լուրջ յեղափոխութեան մասին, որքան այդ կախված լինէր ռուսահայ իրականութիւնից, հարց անգամ լինել չէր կարող։

Թիւրքահայերի անկախութեան գաղափարը ռուսահայ իրականութեան մէջ կարող էր համախոհներ ունենալ, բայց վերջիններս կը լինէին միայն անհատներ, կազմելով անհատների ժողովածու. բայց յեղափոխական բանակ ոչ մի դէպքում։

Դր. Արծրունու ժառանգութիւնը, գլխաւորապէս մեծ հրապարակախօսի «ազգային» գործունէութիւնը, անցաւ Դաշնակցութեան։ Հակառակ, ըմբռնից արդեօք վերջինս իր ստացած ժառանգութեան էութիւնը, թափանցից նրա լօգիքական ներքին հակասութիւնը։

Բոլորովին ոչ։

Դաշնակցութիւնը հանդէս եկաւ, որպէս Արծրունու անշնորհք աշակերտ, աւելի ճիշդ արտայայտված՝ որպէս Բաֆֆու կոյր գործակատարը, վճռելով անմիջապէս իրագործել Արծրունու և Բաֆֆու պրոպագանդան Թիւրքիայում։

Բայց դուցէ Թիւրքահայ իրականութեան մէջ ազգային անկախութեան գաղափարը դասակարգային պատուանդան ունէր։

Դարձեալ ոչ։

Թիւրքահայ ժողովուրդը իր կուլտուրայով, իր դասակարգային շերտաւորումներով կանգնած էր աւելի ստոր աստիճանի վրա. հետևաբար այն, ինչ ասենք թիւրքահայ, անմատչելի էր ռուսահայ իրականութեան համար, նոյնը կրկնակի անհնարին, կրկնակի անմատչելի էր Թիւրքահայ իրականութեան մէջ։

Դրան պերճախօս ապացոյց կարող է ծառայել թէկուզ այն հանգամանքը, որ Թիւրքահայ դասը ծնունդ ստացաւ Ռուսահայաստանում և ոչ թէ Թիւրքահայաստանում։

Կ. Մարկս գրում է. «Խօսելով ընդհանրապէս, իւրաքանչիւրը մի հասարակութիւն այնպիսի իդէալներ է ունենում, որպիսին հնարաւոր է իրագործել նրա իրականութեան մէջ»։

Հետևաբար, եթէ Թիւրքահայ իրականութեան օբեկտիվ պայմանների մէջ յեղափոխութիւնը լիներ հնարաւոր, դաշնակցական կուսակցութիւնը ծագում կը ստանար ոչ թէ ռուսահայերի, այլ Թիւրքահայերի մէջ։

Եւ այդպէս՝ Դաշնակցութեան ստեղծած յեղափոխութիւնը թէ ռուսահայ և թէ Թիւրքահայ իրականութեան մէջ իր տեղ տակ չունէր կեանքի օբեկտիվ պայմանները, դասակարգային պատուանդան։ Նրա բանակը անհրաժեշտօրէն, ճակատագրօրէն բաղկացած պիտի լիներ, ինչպէս իրօք և է, անհատներից, մասամբ մրամբ, բայց քաղաքականապէս ազէտ, մանուկ, իդէալիստներից։ մասամբ պլատոնական, էժանագին ազգասէրներից, իսկ մեծ մասամբ կարիերիստներից։ Աւելի քան պարզ է, որ թէ առաջինները, թէ երկրորդները և թէ երրորդները, ամենայն ինչ՝ բացի ազգային անկախութեան գաղափարից։

Դարձեալ ոչ։

Թիւրքահայ ժողովուրդը իր կուլտուրայով, իր դասակարգային շերտաւորումներով կանգնած էր աւելի ստոր աստիճանի վրա. հետևաբար այն, ինչ ասենք՝ անմատչելի էր ռուսահայ իրականութեան համար, նոյնը կրկնակի անհնարին, կրկնակի անմատչելի էր Թիւրքահայ իրականութեան մէջ։

Դրան պերճախօս ապացոյց կարող է ծառայել թէկուզ այն հանգամանքը, որ Թիւրքահայ դասը ծնունդ ստացաւ Ռուսահայաստանում և ոչ թէ Թիւրքահայաստանում։

Կ. Մարկս գրում է. «Խօսելով ընդհանրապէս, իւրաքանչիւրը մի հասարակութիւն այնպիսի իդէալներ է ունենում, որպիսին հնարաւոր է իրագործել նրա իրականութեան մէջ»։

Հետևաբար, եթէ Թիւրքահայ իրականութեան օբեկտիվ պայմանների մէջ յեղափոխութիւնը լիներ հնարաւոր, դաշնակցական կուսակցութիւնը ծագում կը ստանար ոչ թէ ռուսահայերի, այլ Թիւրքահայերի մէջ։

Եւ այդպէս՝ Դաշնակցութեան ստեղծած յեղափոխութիւնը թէ ռուսահայ և թէ Թիւրքահայ իրականութեան մէջ իր տեղ տակ չունէր կեանքի օբեկտիվ պայմանները, դասակարգային պատուանդան։ Նրա բանակը անհրաժեշտօրէն, ճակատագրօրէն բաղկացած պիտի լիներ, ինչպէս իրօք և է, անհատներից, մասամբ մրամբ, բայց քաղաքականապէս ազէտ, մանուկ, իդէալիստներից։ մասամբ պլատոնական, էժանագին ազգասէրներից, իսկ մեծ մասամբ կարիերիստներից։ Աւելի քան պարզ է, որ թէ առաջինները, թէ երկրորդները և թէ երրորդները, բոլորովին ոչ ոք չեն։ յեղափոխութիւնը, յեղափոխութեան կարիքը, բանաւոր ոչ մի հիմք չունի։

Ահա թէ ինչու Անդրկովկասի ժողովուրդները, գլխաւորապէս վրացիք և հայերը, անկարող լինելով դիմադրել երկրով անցնող և առաջ արշաւող հրոսակներին, հնագոյն ժամանակներից իրաց հաւասարը ուղղել են մէջտ այս և այն կողմը՝ զանելու հնարից և հովանաւորող պատութիւն, որ պաշտպանէր Անդրկովկասի ժողովուրդները անկախութիւնը և կամ հովանաւորէր նրանց թշնամի պատութիւնների դիմադրելու ձգտումները։ Այդ պաշտպանները համար հենց այդ տեսակէտն է մրցակցելու։

Բայց ազգային տեսակէտը թիւրքահայ իրականութեան մէջ պայմանների մէջ անհասանելի աւելի ցեղ ոյժ է ներկայացնում, աւելի աւելին բնաւորութիւն կրում, քան հայ իրականութեան մէջ, և շատ հասանելի պատճառով։

Ազգութիւնը վերացական հասկացողութիւն է. լերան ամրողջութիւն առ գոյութիւն չունի։ Ըստ Ֆրիդրիխ, այնու ամենայնիւ որ պարզ ազգութիւնը դարձնում է մօտաւորապէս ամբողջութիւն։ այդ լինում է այն դէպքում, երբ ազգութեան մէջ գոյութիւն է ունենում իրար կազմակերպված ուժեղ մի դասակարգ, որը արբելով իրականութեան, իր ձեռքը ունենալով հասարակական-պետական հիմնարկութիւնները դէպը, բանակաւորը թելադրում է իր կամքը, իր ցանկութիւնները, իր իդէալներն ամբողջ դասակարգին։ ազգը սկսում է մտածել, դատել, զգալ այդպէս, ինչպէս իշխող դասակարգը։

Ահա այդ դէպքում ազգութիւնը կազմում է գրեթէ ամբողջութիւն, զէթ ստանում իր ամբողջութեան։ Թիւրքիան ունի ուժեղ ֆէոդալական դասակարգ, որը ահագին ազդեցութիւն ունենալով թիւրքական մասայի վրա և զինվելով, ինչպէս Դաշնակցութիւնը, ազգային տեսակէտով՝ կարողացաւ ոչ միայն Դաշնակցութեան, այլ և ամբողջ հայութեան դէմ դնել, թշնամացնել մահմեդական ամբողջ աշխարհը ոչ միայն Թիւրքիայում, այլ և Կովկասում։

Միայն պէտք է լինել չը խոստովանելու համար, որ հայ-թիւրքական կռուրածը Կովկասում տեղի ունեցաւ ոչ միայն շնորհիւ ռուս պատութեան պրոլետարիային, ոչ միայն շնորհիւ դասակարգային շահերի պակասութիւնն և կամ հովանաւորութիւնը, եթէ չ ասվել է ձեզ բերիս չատ թանգ է նստել Անդրկովկասի ժողովուրդներ ին. որովհետև ոչ մի պատութիւն առանց շահի և կամ բոլոր գործունեի երբեք չէ զոհում իր գիւտունեի արիւնը ինչ որ մարդասիրական կամ դաղափարական նպատակների համար... Անդրկովկասի քրիստոնեայ ժողովուրդներից միայն վրացիք էին, որ բաւական երկար ժամանակ կարողացան պահպանել իրանց անկախութիւնը, սակայն դրանք ևս վերջի վերջոյ հարկադրված էին ապրանք ուստ գանկալներին առնել Վրաստանը Ռուսաստանի հովանաւորութեան ներքոյ։ Միաժամանակ Անդրկովկասի մահմեդական ժանր պատութիւններն ևս Ռուսաստանի առաջին զարգացումից վախեցած որ սպառնում էր և նրանց կիսանկախութեան, սրտում էին Պարսկաստանի և Թուրքիայի հովանաւորութիւնն և պաշտպանութիւնը։ Այս է եղել մեծագոյն անցեալի արտաքին քաղաքականութեան գլխաւոր առանցքն Անդրկովկասի ժողովուրդների համար...

Ներկայումս, երբ տապալվեց ռուսական միահեծան բռնակալը և հռչակվեց ժողովուրդների ազատագրման գաղափարը, Անդրկովկասի երեք գլխաւոր ժողովուրդները՝ վրացիք, հայերն ու Թուրքերը փորձեցին ան կախանալ իրենց անդրկովկասեան պատութիւնից։ Սակայն, ինչպէս յայտնի է, այդ չաջողվեց։

Առաջին անգամ աշխարհագրական ձևով ստեղծված այդ պատութիւնը շատ շուտով տեսի տուեց նախկին՝ հին ձևի պատական տեսակին, և ստեղծեցին ազգային պատութիւններ։

Ամենից առաջ անկախացաւ Վրաստանը և հէնց առաջին քայլից դիմեց զօրեղ պատութեան հովանաւորութեան, այլապէս այդ անկախութիւնը վտանգվում էր և հէնց դրա էլ պատճառով է զրեց հին ժամանակների նման Գերմանիան իր հովանաւորութեան ներքոյ առաւ Վրաստանը։ Այս հանգամանքը հարկադրում է Հայաստանի կառավարութեան իր արտաքին քաղաքականութիւնը Վրաստանի վերաբերմամբ վարել այնպէսի հաշուով և ուղղութեամբ, որ լուծեցին գոնէ հաւանութիւն գտած լինի հղօր Գերմանիայի կողմից։ Այնինչ հայկական կառավարութիւնը, իբրև անկախ պատութիւն, պայմանական է, նոյնպէս և պայմանական է նրա արտաքին քաղաքականութիւնը, որը պէտք է միշտ հաշուի առնէ իր հարևան պատութիւնների ուժեղ հովանաւորողների կամքն և ցանկութիւնները։

Գալով յատկապէս Վրաստանի և Հայաստանի փոխյարաբերութիւններին, պէտք է ասել, որ բոլոր այն պայմաններն, որոնք հին ժամանակներից ստեղծել են այդ երկու ազգութիւններին եղբայրական կեանք վարելու համար, այլ և անպայմանապէս շարունակվում են։ Դաշնակցութեան ստեղծած Թուրքահայ ազգային ատելութեան հետևանքն է։

Դաշնակցութիւնը դիկով թափով ազգային տեսակէտով՝ անգոր էր այդ տեսակէտը շահագործել, չունենալով ձեռքի տակ կազմակերպված զօրեղ դասակարգ, շաղկապված իր կիսատան շահերով ազգային անկախութեան հետ, մինչդեռ Թիւրքիան հնարաւորութիւն ունէր գնդապետ Բրոնզարի գլխաւորութեամբ շարունակելու իր գործունէութիւնը։

Եւ այդ էլ, Դաշնակցութեան խանգարեց, ոչ զորքերի քանակի գէմ ճակատ առ ճակատ կանգնած էր ոչ միայն Թիւրքական դաղափարած պատութիւնը՝ իր միլիոնաւոր զինքերով, այլ և ամբողջ Թուրք ժողովուրդը թէ Թիւրքիայում և թէ Կովկասում։

Հակադրելով երկու բանակները, թափանցելով նրանց տրամադրութեան տակ գտնվող ոյժերի տարատեսակ փոխյարաբերութիւնը, դժուար չէ ամենայն հանգիստ, որ եթէ ախոյեան բանակները հնարաւորութիւն ունենային գործ ունենալ իրար հետ ամենայն, առանց երրորդ լինելու կողմնակի ազդեցութիւնների, Դաշնակցութեան, հայութեան բանակին ճակատագրված կը լինէր բնաջնջվել լինել հիմովին, մինչև վերջին զինուորը, հայը։

Եւ մարդս ակամայ հարցնում է իրան, թէ ինչ էր մտածում Դաշնակցութիւնը, ինքնին էր բաղկացած նա, ընդունելով այդչափ զարհուրելի, անհասասար մի կռիւ, —խնայարներից թէ ոճրագործներից։

Պետրոս Մելքումեան

(Պը շարունակվի)

Հայ Դրամատիկ Դերասանական Միութեան Խորհուրդը խորին վշտով յայտնում է իր միութեան անդամներին և արուեստակիցներին, որ երկուշաբթի, օգոստոսի 26-ի երեկոյեան, ծանր հիւանդութիւնից յետոյ փոխանցվեց իրանց ընկեր և արուեստակից դերասան

ՊՕՂՈՍ ԱՐԱՔՍԵԱՆԸ

Յուղարկաւորութիւնը այսօր, հինգշաբթի, օգոստոսի 29-ին, առաւօտեան ժամը 10-ին հանգուցեալի բնակարանից, Բէուսօվսկայա № 2, դէպի Թանդոյեան եկեղեցին, այնտեղից Խոջիվանքի գերեզմանատունը։ 1—1
743.

## Յայտարարութիւն

Թեմիս սրբազան առաջնորդը, առաջադրութեամբ 15 օգոստոսի № 248, պատուիրում է Գայիանեան դպրոցի հոգաբարձութեան՝ առաջիկայ տարվայ համար վարձել տեսուչ և կազմակերպել ուսուցչական նոր խումբ։ Նախկին խմբի բողոքները հոգաբարձութեան դէմ, մանրամասն քննութեան ենթարկվելուց յետոյ, առաջնորդի կողմից թողված են անհետևանք։

Հոգաբարձութիւնը սրանով յայտարարում է, ի կատարումն սրբազան առաջնորդի կարգադրութեան, թէ ընդունում է խնդիրներ տեսչութեան և ուսուցչութեան համար։
առ. 738 1—1 ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

## Հայկական Ակումբի Թատրոն

(ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ)

Այսօր, հինգշաբթի, օգոստոսի 29-ին

Ց. ՈՍԿԱՆԵԱՆԻ

Դրամատիկ դերասանական խումբը
ՕՐԻՈՐԴԱՑ ԿՈՄԻՏԷԻ ՈՐԲԱՆՈՑԻ ՕԳՏԻՆ
կը ներկայացնէ Վ. Վալատանցի

ԵՐԶԱՆԿՈՒԹԻՒՆ

պիէսը 4 գործ.
Մասնակցում է բոլոր խումբը։
Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին։

Վաղը, ուրբաթ, 30-ին, գրական-երաժշտական երեկոյ մասնակցութեամբ դրամատիկ, օպերէտային և օպերայի ոյժերի։ Կը լինի նաև բալետ։ Շաբաթ, Արտաս Ոսկանեանի բենեֆիսին կը ներկ. „Խանդ“ („Ревность“)
736 Սրբազան։ 1—1

## ԱՐՀԵՍՏԱՒՈՐԱՑ ԱԿՈՒՄԲ

(Միքայէլեան փողոց)

Հինգշաբթի, օգոստոսի 29-ին

Հայ Աշակերտաց Դրամատ. Քնկերութիւնը
դեկավարութեամբ Ամօ-Խաչատրեանի, բարեհաճ մասնակցութեամբ Երամեանի, Մարուքեանի, Յարութիւնեան Պ-ի

Ֆօնդի ուժեղացման համար

կը բեմադրէ Բաֆֆու

ԴԱՒԻԹ-ԲԵԿ

պիէսը, 5 գործ.
Բայանդուրի դերը կը կատարէ Ամօ-Խաչատրեան
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին։
Տոմսակները վաճառվում են ակումբի մուտքի մօտ երեկ. ժամը 6 ից։
Բեմադրող Ամօ Խաչատրեան։
Հերթապահ անդամներ՝ Հախվերդեան, Սիրվանեան,
737 1—1

ելել, ապրել կողք կողքի, իբրև բարեացակամ դրացիներ, մնացել են մինչև օրս անփոփոխ։ Անդրկովկասը այլացեղ և այլակրօն ժողովուրդների մէջ միայն հայերն և վրացիներն են, որոնք թէ աշխարհագրական, թէ պատմական և թէ վերջապէս կենցաղագրական տեսակէտից հասանման պայմանների մէջ են և հէնց այդ պատճառով էլ համարեա հնուց եղել են բաղդակից, այսինքն թէ դժբաղդութիւնն և թէ երջանկութիւնը միատեսակ արտաքին պատահարներից և կամ միևնոյն աղբիւրից են առաջ եկել երկու ժողովուրդների համար ևս։

Այս ամենը թելադրում է պնդելու, որ այսուհետև ևս պէտք է ճգնել հաստատելու բարի դրացիութիւն երկու հարևան տաւիթների միջև, ամրապնդելու փոխադարձ բարեկամութեան և աշակցութեան կապերը, լուսի յարգանքով և օրինական իրաւահաւասարութեամբ վերաբերվելով իւրաքանչիւր ժողովրդի ինքնայատուկ շահերին և իրաւունքներին։

Ներկայումս համաշխարհային պատերազմը և դրանից առաջ եկած ռուսական յեղափոխութիւնը, համարձակ կարելի է ասել, յեղաշրջել է ամբողջ աշխարհը։

Զը կայ երկրագունդս վրա մի տեղ, մի ժողովուրդ, որն իր վրա չը զգար համաշխարհային պատերազմը ծանրութեան հետևանքները։ Իսկ մեր երկրի համար, որն արդէն իրեն ռազմական է ներկայացնում, պատերազմի հետևանքները կարող են ուղղակի կործանարար լինել, եթէ մանաւանդ հայերն ու վրացիք օր առաջ խելք խելքի տուած չը մտածեն և մի ընդհանուր համաձայնութեան ծրագրով չընթանան արտաքին քաղաքականութեան մէջ։

Ներկայումս խորը պատմական դէպքերն այնպիսի գահավէժ արագութեամբ են ընթանում, որ մարդկային միտքն անգամ անզօր է լինում ոչ նախատեսել և ոչ էլ կանխել։ Մի շարք պետութիւններ առաջացան, մի շարք պետութիւններ ստեղծվեցին, բոլորն էլ անսպասելի և յանկարծակի՝ պատմական տեսակէտից կայծակնահար արագութեամբ։ Դեռ համաշխարհային պատերազմը շարունակվում է, ով գիտէ, էլի որքան ժամանակ։ Ինչպէս ասացինք, ամենայն հաստատութիւն, ամենայն պատմական ընդհանրացումներ ենթարկվում են մեծ փոփոխութեան

Արևմտեան զօրաճակատի կռիւների վերաբերմամբ «Հէլսինգֆորսբլատերը» գրում է. «Անկասկած է, թէ մեծ աջողութիւններ, որոնց ձգտում են համաձայնութեան պետութիւնները արևմտեան զօրաճակատի վրայ, այնքան էլ շուտ ձեռք չեն բերվի։ Ընդհակառակը, Գերմանիայի պաշտպանողական պատը օրէ օր դառնում է աւելի ամուր, անընկճելի։ Իսկ եթէ համաձայնութեան պետութիւնները հետևանքների չը հասնեն, հարց է, թէ ինչպէս պէտք է արդարացնեն նրանք իրանց անթիւ մարդկային ու նիւթական կորուստները»։

# ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(Անդր. Հեռ. Գործ.)

— • —

## ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՍԿՎԱ, 25 օգոստոսի.—Մամուլի բիւրօն յայտնում է. Օրէնբուրգում կալանաւորվել են մենշեվիկների պարագլուխները կօզակների ձեռքով։

Գերմանիայում շարունակվում է հանքային բանուորների գործադուլը։

Անգլիայում և Ֆրանսիայում մասսաները յեղափոխականանում են։

Իտալիայի դրութիւնը յիշեցնում է նրա հին հակառակորդ՝ Աւստրիայի դրութիւնը։

Սպանիայում դրութիւնը օրէ-օր վատթարանում է։ Այդպիսի պատկեր նկատվում է նաև չեզոք երկիրներում, ուր տեղի են ունենում ցոյցեր և ընդարձակ ոստիկանութեան հետ արիւնալի վրաձանով։

Խորհուրդների Ռուսաստանի դրութիւնը քաղաքական տեսակէտից կայուն է։ Բոլոր հակագրումները հաւանութիւն են տալիս կ. դ. կ. քաղաքականութեանը։ Ամեն մի հակայեղափոխական փորձ ճնշվում է ամենանախայ կերպով։ Մոսկվայում գնդակահարված են Մոսկվայի ժանդարմական վարչութեան յայտնի պաշտօնեաներից մի քանիսը։

Ուկրայնայում շարունակվում է ապստամբական շարժում։ Մեր պահանջով գերմանացիք խոստացել են դադարեցնել Ուկրայնայում կատաւորական կարմիր զօրք կազմակերպելը։

Մոսկվայում պատրաստութիւններ են տեսնվում դնել աջակցներ յեղափոխական գործիչներին, գրողներին, բանաստեղծներին, փիլիսոփաներին և արտիստներին։ Ակնառանքին մասնակցում են Մոսկվայի հռաբիա բոլոր քանդակագործները։ 2—3 տարի յետոյ Մոսկվան կը առնի Մարքսի, Էնգելսի, Բեբելի, Սամչկա Ռազինի, դուքսբրիստների, Գլեբովի, Կալտեզի, Շեվչենկոյի, Կոլցօվի, Նեկրասովի, Գրուբելի, Լրմոնտի Կօրսակովի, Շոպենի, Սկրեաբինի և ուրիշների արձանները։ Հեղափոխութեան մատդրութիւն կայ կանգնեցնել 61 արձան։

Մոսկվայի խորհուրդը, մտնելով աշխատաւոր դասի դրութիւնը, որոշեց վերցնել ամեն արդելք, որ դրված էր ալիւրի ներմուծման համար և ամենախիստ սրջոցներ ձեռք առնել ալիւրի սպեկուլիանտների դէմ։

1919 թ. յունվարի 1-ից ռուսական հանրապետութեան մէջ մուծվում է չափի ու կշռի միջազգային սիստեմը։

Մթամտական «Голосъ Кіева» բացարձակ մատնանշում է, թէ Հիմնադիր ժողովի միաքը պէտք է օգտագործվի բոլոր կուսակցութիւնների դէմ, որոնց յետոյ Հիմնադիր ժողովը պէտք է համարի իր դերը ուսարտած։

ՄՈՍԿՎԱ.—Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Չիչերինը կառավարութեան անունից պաշտօնապէս բողոքում է գերմանական կառավարութեան դէմ Դոնի պատասխանների, այսպէս կոչված Ղրիմի կառավարութեան հետ յարաբերութիւնների, որովհետև Դոնը և Ղրիմը գտնվում են ռուսական խորհուրդների հանրապետութեան կազմի մէջ։ Ապա Չիչերինը բողոքում է, որ գերմանուկրայնական զօրամասերը անցել են սահմանաբաժանի գիծը։

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

### ՀԱՅԿ. ԴԻՒԱՆԱԳԻՏ. ՆՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒՑ ԶՈՒՄԻՐԻՆ

Մեր ստացած տեղեկութիւնների համաձայն, Հայաստանի կառավարութիւնը իրաւաբան և ազգ. Դէորգ Խալեցեանին նշանակել է որպէս իր դրուանագրական ներկայացուցիչ Ալէքսանդրապոլում օտ. իշխանութիւնների մօտ։

### ԹԻՒՐՔԵՐԸ ԵՒ ԵՐԿԱԹՈՒՂ. ՀԱՅ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԸ

Հայաստանի սահմանները մտնող երկաթուղային ծառայողները (Քօլագերան, Դսեղ, Խաչէն, Շահալի և այլն) տեղեկացնում են հայկական դիւանագիտական միսսիային Վրաստանում, թէ Թիւրքը իշխանութիւնները իրանցից խլում են սիթիրներ, զգեստներ և հագուստներ չեն տալիս ցորենը կալսելու։

Ծառայողները բողոքելով այդ առիթով խնդրում են միսսիային այդ մասին իրազեկ կացուցանել գերմանական և Թիւրքական միսսիաներին, որպէս զի որոնք առաջնորդեն նման երևոյթների Հայաստանի այն մասերում, որոնք դեռ գտնվում են Թիւրքերի ձեռքին, հակառակ Բրէստի պայմանագրի։

## ՆՈՐ ԱՐՇԱՒԱՆՔ ԲԱԳՈՒԻ ԴԷՄ

«Борьба»-ի մէջ կարդում ենք.

Խորհուրդների իշխանութեան անկումը Բագուում չափազանց մեծ յուզմունք է առաջ բերել ժողովրդական կոմիսարների խորհրդի մէջ։ Անմիջապէս վճիռ կայացվեց ուղարկել Բագուի դէմ խոշոր զինված ոյժեր քաղաքը նուաճելու համար։ Այդ վճիռը շատ գաղտնի էր պահվում։ Մամուլի մէջ ոչ մի խօսք նրա մասին չը գրվեց։ Սակայն Թիֆլիս եկած մեր ընկերներից մէկը խօսակցութիւն է ունեցել Բագուի դէմ ուղարկված զօրաբանակի հրամանատար Եաշվիլի հետ և նրա անձնական ադիւտանտ Գէորգի Լազարաշվիլի հետ։ Բացի դրանից, այդ ընկերը անձամբ տեսել է օգոստոսի 6-ին Մոսկվայից զօրաբաժնի առաքումը։

Զօրաբաժինը բաղկացած է 5000 կարմիր գվարդիական զինուորներից, ուժեղ արտիլերիայով և մեծ թիւով գնդացիրներով, տեղից թիւով ռազմամթերքներով ու փամփուշտներով։ Արտիլերիան և գնդացիրները բեռնեցին մի ամբողջ գնացքի վրա։ Ռազմամթերքները 80 վագոն էին։

Գլաւոն Եաշվիլին մեր ընկերոջը հաղորդել է այն յանձնարարութիւնները մասին, որ զօրաբաժնին տուել է Լենինը։ Այդ զօրաբաժինը ամենից առաջ պէտք է տապալէ Բագուի նոր կառավարութիւնը և արտաքսէ Բագուից անգլիացիներին, իսկ եթէ այնպէս լինի, որ քաղաքը չը Ֆայ խորհուրդների իշխանութեան ձեռքում, այն դէպքում Եաշվիլին և նրա մարդիկ պէտք է հրդեհեն նաւթահանքերը և աւերեն Բագուն։

Բայց այդ խնդիրներով զօրաբաժինը չի բաւականանալու։ Զարգելով անգլիացիներին, մենշեվիկներին և դաշնակցականներին, զօրաբաժինը պէտք է փորձայ ազրբէյջանցիներին և նրանց հետ միասին արշաւանքի ձեռնարկէ Թիֆլիսի վրա։ Ընկերոջ հարցին Գլաւոն Եաշվիլին բացատրել է, թէ ազրբէյջանցիների մեծ մասը բոլշևիկների դէմ է և թէ բոլշևիկները յոյս ունեն նրանց օգնութիւնը վրացական հակայեղափոխութիւնը չախչախելու համար։

### ՀՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ ԲԷԼԻ-ԿԼՈՒԶՈՒՄ

Վրաց 6-րդ գնդի հրամանատար Մազինովը օգոստոսի 27-ից հեռագրում է վրաց կառավար. գենե. մենշեւիկ Բէլի-Կլուզին, թէ ինքը մի խումբ օֆիցէրների հետ միասին ենթարկվեց հրաձգութեան։ «Տեղական և ազգաբնակ գիւղերի ազգաբնակութեան ահագին ամբոխը պաշարեց ապրանքների պահեստը և ներկայացրեց 1 ժամվայ ուլտիմատում, առաջարկելով պահանջները վերցնել, հակառակ դէպքում սպառնում են կրակ բանալ։ Արդէն հատ-հատ հրացանաձգութիւն է սկսվել»։

Սազինովը օգնական զօրք է խնդրում, որովհետև տեղական ոյժերը բաւական չեն։

### ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԷՊԻ ՀԱՅԵՐԸ

«Борьба»-ի մէջ կարդում ենք. «Վերջին ժամանակ խստ փոփոխութիւն եղաւ բոլշևիկների վերաբերմունքի մէջ դէպի հայերը, մասնաւորապէս դէպի դաշնակցականները։ Դեռ յուլիսին բոլշևիկները հայերին համարում էին իրանց լաւագոյն դաշնակիցներ Անդրկովկասում։ Դրա համար պատասխան «Изв. ц. исп. ком.»-ի մէջ տպվեցին երկու զգուշանակաւոր յօդուած Անդրանիկի մասին։ Բայց յանկարծ բոլշևիկները գտան, թէ հայերը իրանց արդուեալ թշնամիներն են։

Երկու յօդուածների հեղինակներն իսկոյն կանչվեցին «Изв.»-ի խմբագրատուն և այդտեղից ուղարկվեցին բանտ։

Դրա հետ միասին հրաման արձակվեց փակելու Ռուսաստանում բոլոր հայկական կազմակերպութիւնները։

### ՐՕՍՏՕՎԸ ՎԵՐԱԳՐԱՒՎԱԾ

«Терская Правда»-ն հաղորդում է.

Ստոյլ տեղեկութիւնների համաձայն, Ռոստովը գրաւել են խորհրդային զօրքերը։ Գերմանացիները դատարկել են քաղաքը։

Ռոստովում վերականգնած է խորհուրդների իշխանութիւնը։

Գերմանացիների նահանջը բացատրվում է արևմտեան ռազմաճակատում կրած անաջողութիւններով։

### ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԱՆՑՔԵՐԸ

Հին-Նախիջևանից տասն օր առաջ եկած Անանիա Վասիլիկօն տալիս է հետեւեալ տեղեկութիւնները.

«Յուլիսի 4-ին (հ. տ.) ինչ-որ գրքեր կրակելով սկսեցին մոտենալ քաղաքին։ Ազգաբնակութիւնը կարծում էր թէ եկողները հայեր են, բայց շուտով պարզվեց, թէ նրանք Թիւրքական զօրքեր են՝ տեղական թուրքերի հետ միացած։

«Հետեւեալ օրը տեղի ունեցաւ ընդհարում, որից յետոյ Թիւրքերը մտան քաղաք, որի բնակչութիւնը արդէն փախել էր։ Մնացողները վերցվեցին գիրի և խմբերով տեղաւորվեցին զանազան չինութիւններում։ Մեզ՝ 13 հոգու՝ տարան քաղաքից 12 վերստի վրա գտնվող զօրանոցները։ Սմսոնաւա (ռուս) Նիկոլայ Վասիլենկոյին՝ իմ աչքի առաջ սպանեցին։ Զօրանոցներում ես տեսանում եղայ սարսափելի տեսարանների։ հայ կանանց բերում էին զօրանոցի մօտ պարտէզը և մեր աչքի առաջ բռնաբարում ու ծաղրում։ Զէյն խլեցում մինչև իսկ 7 տարեկան աղջիկներին։ Ես ազատվեցի որպէս ռուս։ Ինձ՝ ծանր տանջանքներից յետոյ։ Քաղաքում մնացածները վարդապետի հետ միասին տարվեցին ինչ որ տեղ։ Ասում էին, որ նրանց սպանել են, առանց ոչնչի խարութեան։ սպանելուց նաև շատ ռուսներ։ Տեղական թուրքերը գերիներին իրանց ձեռքը յանձնելու համար ստիպում էին իրանց չնչի համար վճարում էին 60—70 ր.։ Թիւրքերը հանդգնով վարվում էին իրանց մօտ դտնվող գերիների։

«Նաւք հետաքրքիր բան այն, որ քաղաքում բոլորովին հայ չը մնալով հանդերձ՝ աւերվեց ամբողջ քաղաքը։ Այդ բռնութիւններին տեղական թուրքերից մասնակցում էր Ալի Բէգ-ուսովը։ Բռնութիւններն այն տարիան զզուելի էին, որ բռնաբարելու համար կանանց կոչում էին ծառից։ Բարքանչիւրի մօտ հարիւր էին դանդում 12—13 հոգի։»

Մի ուրիշ տիկին՝ Հարիսիսէ Հրմանան, որ Հին-Նախիջևանից դուրս է եկել քսան օր առաջ, պատմում է.

«Յուլիսի 4-ին տեղական թաթարները և թուրքերը սկսեցին կրակել հայերը թաղի վրա։ հայերը գրան չը պատասխանեցին։ Յետոյ յուլիսի 5-ին ոչնչով տաք կրիւ, որի վերջում երկու կողմերն էլ ունեցան խոշոր կորուստներ։ 6-ին թաթարներն ու թիւրքերը տան քաղաք։ Առաջին պահ թիւրք տղերքները թաթարներին արգիլեցին մեզ թալանելու։ Քաղաքի հայերը բոլորը փախան, բացի 150—180 մարդուց յաչորդ վարդապետի հետ միասին։

«Յուլիսի 7-ին թիւրքերը, թաթարների թնդրանքով, նրանց երկու ժամ ժամանակ տուին հայերի հետ հաշիւ տեսնելու և թալան անելու։

«Թէ ինչեր կատարվեցին այդ ժամանակ, դժուար է նկարագրել։ Բոլոր տները, ի հարկէ, մինչև վերջին թելը կողոպտվեցին։ Թաղված հայերին դուրս էին քաշում թաղատեղիներից և սպանում հէնց տեղն ու տեղը, հարազատների աչքերի առաջ։ Քաղաքում մնացած հայերին մերկացնում և գնդակահարում էին։ Կանանց տանում և բռնաբարում էին։ Դրանցից շատ-շատերը ինքնասպանութիւն գործեցին, չը կանանալով ենթարկվել բռնութեան և խայտառակութեան։

«Վերջում քաղաքում ոչ մի հայ չը մնաց։ Կանանց բռնաբարութիւնները կատարում էին ոչ միայն տեղական թաթարները, այլ և առաւելապէս թիւրք ասկերները»։

### ԳԵՐՄ. ՏԵՂԵԿԱՏՈՒ ԲՐԻՄՕՑԻՑ

(Դօկտ. Յուլմայերի հաղորդածներից)

I

Արևմտեան ռազմաբեմում.—Անգլո-ֆրանսիացիք շարունակում են սուլալը թափով իրանց առաջխաղացումը, որը աննախադէպ է այս պատերազմի ընթացքում։ Այսօր մեր պատերազմական ուսումնական է, որ մարդիկ արդէն տեղ-տեղ կարողացել են ֆրանսիացիներին ետ շպրտել։ և ասում յոյս ունենք, որ արդէն մեր պահեստ զօրքը պիտի կարողանայ թշնամուն ետ շպրտել։ հակառակորդը սրանից յետոյ ոչ թէ չը պիտի կարողանայ առաջանալ, այլ ստիպուած մեծ զօրաւոր կռուներ կունենայ։ Դա հինգ-տասնօրեայ առաձգական տատանում է։

Յուլիսին գերմանացիք հեռ յարձակումներ գործեցին և շատ տեղը գրաւեցին։ Ֆրանսացիք այժմ կաշտոնական տրամ 80%-ը ետ վերցնել։

Ռուսաստանը ներկայ դրութեան մասին.—Մեր այս այս, թէ ինչ սեռք գրաւ տեղեկատու բանից բանալու-դանագրելուց, այնքան է մեզ յայտնի, որ շէնք ալիսպասները հրաւիրված դրուած են մեզ ու։ Ֆրանսա-անգլիական լաստերները պատանչում են իրանց գատարութիւնները օգնութեան գալ շէնք-ալիսպասներին, որովհետև գ. տրանելու ֆրանսերէն նոսար մեզ կարդ բանելու ուներ։ Նրանք աշխատում են ռուսներին դիրքեր մեզ դէմ պատերազմ դուրս բերել։

Զրա-նապօնական եւ նապոլ-ամերիկական դաշինքներ մասին.—Նապոլ-ամերիկական դաշինք վաղուց գոյութիւն ունի։ սրանք բոլորը սիրացած են մեր դէմ՝ մեզ ոչնչացնելու։ Բայց հատատ է, որ այս կռուից յետոյ նրանք իրար դէմ պէտք է գուրս գան, ի հարկէ տնտեսական հողի վրա։ Նապոնական մթնոլորտը մի ժամանակ պարզ տուել է, որ նրանք կռուից յետոյ դարձեալ մտնելու են գերմանացիների հետ։

II

Մերքրում և Ռուսաստանում անգլիացիների գործողութիւնները զանազան նպատակներ ունեն։ Նախ և առաջ Անգլիան կամենում է Ռուսաստանին մի նոր կռիւ մէջ ձգել Գերմանիայի դէմ։ Անգլիան մեծ հանգստութեամբ պիտի նայէ Ռուսաստանի կործանման վրա, միայն թէ Գերմանիան ստիպված լինի բերել մի քանի կօրպուսներ արևմտեան ճակատից արևելեանը։ Ֆրանսիան անկասկած կը ցանկանայ Ռուսաստանի խաղաղութիւնն ու անդորրութիւնը, որովհետև ֆրանսիական ժողովուրդը Ռուսաստանի գլխաւոր պարտատէրն է, շատ փոքրիկ կապիտալիստներ ապրում են Ֆրանսիայում ռուսական փոխառութեան տոկոսներով։ Ձեռք է բերել Սիբիրի հանքային հարստութիւնները և կամենում է հիմա ձեռնամուխ պայմաններ ինքել տեղական սիբիրական կառավարութեան հետ։ Բայց նապոնիան այդ չի թոյլ տալիս և այդ պատճառով իր զորքը ուղարկեց Սիբիր։ Հաւանական է, որ Լենինանն էլ զորք ուղարկի նապոնացոց դէմ։

Գաշնակիցների կարծիքով, Ռուսաստանը պարտաւոր է տալ իր վճռին ինչքը։

Գերմանիան, յաղթելով Ռուսաստանին, դաշինք կնքեց և առալարկեց թէ ոչ թեթև, բայց տանելի պայմաններ։ Նոյնիսկ Բրեստ Լիտովսկի պայմաններից յետոյ Ռուսաստանը կարող է ուժեղ և կարող պետութիւն մնալ։

— Գարսկատանից Ինչ լուրեր կան։

Անգլիացիք շատ հեռու են Թաւրիզից, կարիներ տեղի են ունենում վերջինից հարաւ-արևելքից 50 վերստ հեռու։ Միանգամ անգլիացիների ձեռին է։ Թիւրքերը դրաւել են Հալի Ագան, Ուրմիայից 20 վերստ հեռու։

— Գերմանիան առաջարկել է վրաց կառավարութեան Բաթումը տեղափոխվել։

— Ոչ, դա պրովոկացիա է։

— Լաւ ենք, որ գեն. Կրեսը գնալու է Երևան, ինչ նպատակով է գնում։

—Այո, գնալու է, միայն նպատակը հիմա չեմ կարող ասել։ Ե. Օհանեան

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՅՈՎՆԱՆ ԴԱՒԹԵԱՆ

Շվեյցարիայի ժընէվ քաղաքում, ինչպէս հաղորդում է «Հորիզոնը», այս փետրվարի 17-ին վախճանվել է յուլիսի 6-ին Դաւթեան, Թոքախտ հիւանդութիւնից, որ երկար տարիներ հրեծում էր նրա կենաքը։

Հանգուցեալը Դաշնակցութիւն կուսակցութեան ամենահին գործիչներից մէկն էր, մի գաղափարական անձնաւորութիւն, նման հանգուցեալներ Մէքայէլեանին, Զաւարեանին և յաւիտենականութեան գիրկն անցած այնօրինակ նուիրեալ անձնաւորութիւններին, որոնք իրանց հայրենիքի և տանջված ազգի ցաւերի դարմանը փնտռելու և ապեղանի դնելու գործին էին նուիրված, անտես անելով իրանց կարիքներից օգտվելու և անձնական ապահով ու բարեկեցիկ դրութիւն ստեղծելու նիւթապաշտական պահանջների տակտիկան, որի երկրպագուներին, դժբաղդաբար, մենք այսօր ականատես ենք եղել և ենք։ Եւ այդ է պատճառը, որ այդպիսի մաքուր գործիչները յաւիտենականութեան գիրկն են անցել նիւթական անանխանձելի դրութեան մէջ առանց մի կօպեկի։

Այդպիսի նուիրական ու բաւական լայն իմաստով գաղափարական գործիչների անհնարին առաջ է, որ կը խոնարհենք մեր գլուխը և կասենք՝

— Երանի՜ էր թէ ձեր ընկերներից, եթէ ոչ ամենքը, գոնէ մեծամասնութիւնը ունենար ձեզ պէս այն մաքուր հոգին ու ամբիծ՝ աւանտիւրաներից ու եսական քարեկեցութեան հանից չը սլացող՝ գործունեութիւնը հասարակական ասպարէզում։ գուցէ այդ դէպքում, ով գիտէ, մենք հայերս այսօրվայ աննախանձելի վիճակի մէջ չը գտնվէինք։

Հանգուցեալը անցեալում աշխատակցել է և «Մշակին»։ Թ.

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— ԹԻՖԼԻՍ

✦ Թիֆլիս է եկել Վրաստանի կառավարութեան կից նշանակված օտարների ներկայացուցիչ Արդիւլ-Բերիմ-բէյը։

✦ Թիֆլիսի քաղաքային անհիտարական բժշկական խորհուրդը անհրաժեշտ է դատեցել, խօլերայի բռնկման պատճառով, աւելացնել շաբաթի բոցիոնը և կազմակերպել հացրած ջրի ձրի հայթայթումը։

✦ Հ. Դրամատիկ. Ընկերութեան խորհուրդը դիմաց Արաքսեանի ժանվան պատճառով որոշեց ցաւակցութիւն յայտնել հանգուցեալի ազգին, տալ դրամական օժանդակութիւն և ամբողջ կազմով ներկայ լինել ամբիոնին և թ-դամը։

✦ Ինչպէս յայտնի է, որ քանի օր առաջ կառավարութիւնը թոյլ է տուել, որ ապրանքները գալով են բաց մեզ ասեանած ժամանակը ուշ գիշերվայ 11 բացաց, եթէ այդ ժամանակից յետոյ մտ վառ. այժմ ակայն քաղ-քաղաքները դիմել է սիլիսթրի պարտ, առաջարկել բոլոր զատարանները փակել ուշ ժամը 11 ին, ոչ ակ բացառութիւն չանելով արևե ապրանքի, գաղեր, գիներ, ընդ. լուսաւորվելիս լիսեռ սրանք։

✦ Սրեկ Թիֆլիսի բոլոր քաղաք հիւանդանոցներում կատարվեցին խուզարկութիւնները յանցաւոր տարրեր փնտռելու։

✦ Նարեան վախճանված դր. Բազանբաւի տեղ Մէքայէլեան քաղ. հիւանդանոցի առաջ օրգիտատոր է նշանակվել Մուրատէ։

✦ Վրաց կառավարութիւնը որոշել է բարձրացնել մարդանեցի փոխադրութեան տարիքը պուդրն 57—60 կոպէկ։

✦ Վրաց կառավարութիւնը որոշել է սեղանաւորի 10-ից վերացնել այն արտոնութիւնը, որով օֆիցէրները օգտվում էին երկաթուղին I և II դասքներով։

✦ Վրաց կառավարութիւնը զրաւել է Բէյսոլը տաղաքանը, ուր տպում է անդրկովկասեան բաներ։

✦ Սրբոյդ օրն է Վլադիկավկազից գալիս ես մեծ թուով փախստականներ։

✦ Այսօր հայ Սրբոյդաց Կօմիտէն իր ատեան որքանոցը օգտագործ Հայկական Ազգանպաստ կազմակերպում է շքեղ ներկայացում-երեկոյթ. թատրոնում դրվելու է Վ. Վալդեանի «Սրբազանութիւն» դրաման, իսկ այդում կատարելու է գրական-արժէքաւոր բաժինը։

✦ Այսօր, սրբոյնան ժամը 7 ին Սրբոնոցի տաճը (սեռնակ № 24) կը կատարվի հայրենակցական սրբութիւնների սրբութեան կոնտրօնական խորհուրդը նստաց։ Ներկայացուցչների ներկայութիւնը պարտադիր է։

## ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

### ԿՕԶԱԿՆԵՐԻ ԵՒ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ԿՈՒՐԻՒ ՎԱԼԱԻԻԿԱՎԿԱԶՈՒՄ

I օր.

Սրեքշաբթի 6 օգոստոսի.—(Ռ. տ.) Գնացքային դրութեան մէջ գտնում եմ ինչ որ տեսածս բան և լսում մի քանի անհանգստացուցիչ խօսքեր, թ մէջի այլոց թէ հիրա է քաղաքում, և մեր ցատկում, հանգիստ և այդպէս մնում։ Ճշդի է, սոսկալի հրացանաձգութիւն է քաղաքի արևմտեան կողմում, մեզնից ոչ հեռու։

Նուազ մեր բակն են լցվում թաղերի պահապանները, հսկելու համար որ աւազակները չը կողոպտեն տները։ սրանք մեզ տեղեկացնում են, թէ կողոպտիչներն են քաղաքի վրա յարձակվողները։ Ես դիտում էի շաբը, որ գտնվում էր ճշդի մեր դիմաց և ուր սոսկալի հրացանաձգութիւն էր. կողմերը յարձակվելով գլուխով և յանկարծակի՝ աջողել էին ստանալ շտաբին, ուր և կատաղօրեանում է այժմ կռիւը։ Ես անընդհատ նայում եմ շտաբի կողմը, պահելով որը հրացանաձգութիւնը սառակատում է։ Յանկարծ ոչվոց մի առղ տաղաղ, լսվեց հուրա ազաղաղը, և դրսացի կողմից երացան կողակները, որոնք շատ էին լցվում։ Նստաբ կոչվող պարտէզի գաղթի դարպասները վերջին գլուխները սուլիների ծայրին, և կրակը դադարեց։ զինվորները առաջ էին գալիս, երբ յանկարծ նորից կրակը հանեցին պայթեցին, և զինվորները ոչ ամենաքիչ թիվ։ Այս անգամ բոլշևիկները յարձակվեցին, բայց անօգուտ։ Սպանված նոր տալով երանց դիրքերը քաշվեցին ծերկը ընդուշները բոլշևիկներին օգնութեան եկան։

Ամբողջ օրը, քաղաքի ամեն կողմից պայթում էին հրացանները և քաղաքը դժոխքի

Օգոստոսի 30-ին, ուրբաթ օրը, ժամը 6-ին տեղի կունենայ Հայ Ուսուցչական Միութեան

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Արամեանի տանը (Գոլովինսկի № 7)

Օրակարգ՝ 1. Կանոնադրութեան հաստատութիւնը.
2. Նոր վարչութեան ընտրութիւնը.

Խնդրվում է բոլոր անդամ-անդամուհիներին և Թիֆլիսի դասատուներին ներկայ լինել ճշդի ժամին։

Հայ Ժողովրդ. Դպր. Ուսուցչ. Միութեան Վարչութիւն

742. 1—1

«Մեղու» աշխատանքի տան կից հիմնվում է

# ԿՕՕՊԵՐԱՏԻՎ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Անդամավճարն է 27 ր. 50 կ.։ Անդամագրութիւնն ընդունվում է «Մեղու» աշխատանքի տան գրասենեակում առաւ. ժամը 9—2-ը (Авлабаръ, Лазаревская 1).

(ս. մ.) 744. 3—1

էր փոխվել։ Երեկոյեան դէմ դադաբեց հրացանաձգութիւնը և կարծես քաղաքը հանդարտեց։ Գիշերը ընդհատ ընդհատ հրացանաձգութիւն կար։ Կոզակները այսօր վերցրել են քաղաքի հարաւ արևմտեան մասը և ամրացել։

II օր.

Հոգեբշաբթի, 7 օգ.—Առաւօտեան հանդարտ է։ Մենք բաղաբ ենք գնում, հաց և ուտելիք առնում։ Տուն դառնալուց մի քիչ յետոյ սկսվում է կռիւը, որ կենտրոնանում է նորից շաբի շուրջը և հիւսիսից հարաձգվող փողոցներում։ Կոզակները եկել էին մինչև Բաղարնայա փողոցը և այնտեղից խփում էին Մոսկովսկի բուլվարի վրա ամրացած կարմիր գվարդիականերին։ Մեր տունը Մոսկովսկի վրա է, իսկ մեր երկու կողքերը ձգվում են Մարինսկի և Մեշչանսկի փողոցները մինչև Բաղարնայա։ Մեր տան դիմաց եղող գիրքում, բոլշևիկները նեղվելով գնդացիրներ դրին այդ փողոցների դիմաց և քշեցին կոզակներին։ Ամբողջ օրը փոթորկալի համազարկեր էին տեղ կողմը, որը շարունակվեց նաև գիշերը։ Կոզակները ամրացել էին Բաղարնայա փողոցում և շաբի շուրջը։ Իսկ օսերի թաղից ամբակոծում էին շաբը։ Բոլշևիկները պատասխանում էին թնդանօթներով։

III օր.

Հինգշաբթի 8 օգ.—Կռիւը սաստիկ է. մեր տան կողքի փողոցների դիրքերի վրա, երկու փողոցների ուղղութեամբ, բոլշևիկները հերթաբար կռւում են. մինչև երեկոյ 4 սպանված և 4 վիրաւոր տալով դիրքերն ամուր պահեցին։ Ամբողջ օրը կատաղի հրաձգութիւն էր, որին երեկոյեան միացաւ մի սոսկալի թնդանօթաձգութիւն։ Բոլշևիկները շրապնելներով ռմբակոծում էին օսերի թաղը։ Կոզակների կռիւը մեզ անտեսանելի էր։

Մեր գտնված տան մէջ գտնվում են 60 ի մօտ գաղթականներ, որոնք տան տէրերի հետ սարսափի ժամեր էին անցկացնում։ Այստեղ մինչանկել կերպով յիշատակութեան արժանի է մեր բնակած տան տէր Ադամ Ալէքսանդրովիչ Օսիպովի և տիկնոջ գնահատելի վերաբերմունքը։ Մենք 2½ ամսից ի վեր ապրում ենք այս տանը որպէս վարձուր, և զարմանքով ականատես ենք լինում տէր և տիկին Օսիպովների դէպի գաղթականութիւնը ցոյց տուած ազնիւ և մարդասէր վերաբերմունքին։ Գաղթի առաջին հոսանքից, գաղթականներին փողոցներից իրանց տունը բերին, որոնց անընդհատ ամեն կերպ թէ ուտեստով, թէ փողով և թէ զոյգ գտնելով օգնեցին։ Շատ անգամ փողոցներից պատահական գաղթականներին 10—15-ով բերում, կերակրում, շոր տալիս և համբուռ էին։ Արդէն առաջուց գաղթականութեան օգտին նուիրած էին 25,000 ր., որը համեմատելով իրանց ունեցած կարողութեան՝ շատ մեծ զոհողութիւն կարելի է համարել։ Մենք աւելի մեծ զարմանքով ականատես եղանք այս կռիւների մէջ այս մարդասէր ընտանիքի ազնիւ վերաբերմունքին, մինչ շատերը այդպիսի պարագաներին մահու սարսափի ազդեցութեան տակ մոռանում են բարեգործութեան մասին մտածելն անգամ, սրանք յարաբերութեան կոչված լինելն ի նկատի ունենալով, որի հետևանքով գաղթականներն ուտեստ ճարելու հնար չունէին, թոյլ չը տուին որևէ մէկին այդ ուղղութեամբ մտածել անգամ և իրանց ընտանիքի անդամների պէս կերակրեցին բոլորին։

IV օր.

Ուրբաթ, 9 օգ.—Առաւօտեան կոզակները վերցրել էին շաբը և մեր փողոցը, ու մենք արթնանալով նրանց մեր շուրջը գտանք։ Նրանց հետ են նաև օսերը։ Գիշերը կոզակների հրեատանու ճնշումից՝ բոլշևիկները թողել էին շաբը և նահանջել քաղաքի հիւսիսը։ Նրանք այժմ քանել են Գոսպիտալնայա փողոցը, քաղաքային հիւանդանոցն ու կայարանը։ Նրանց ձեռքին է նաև զրահապատ գնացքը։ Իսկ քաղաքի հարաւում մոլոկանները ամրացել են իրանց թաղում և կռւում են կոզակների ու օսերի դէմ։ Բոլշևիկների հետ են նաև տեղս գտնվող 100-ի չափ չինացիներ։

Կոզակները ասում են, որ մօտ օրերս գան։ Ալէքսէևը 30,000 մարդված զօրքով տեղս կը գայ և կարգը կը վերահաստատի։ Մինչև երեկոյ Թոյլ հրացանաձգութիւն էր։

V օր.

Շաբաթ, 10 օգ.—Կռիւը շարունակվում է քաղաքի հիւսիսում։ Հրդեհվել են մօտ 7 տուն։ Ակտիվ գործողութիւններ չեղան։ Կոզակները դիրքեր ընտրելով են զբաղված։

VI օր.

Կիրակի, 11 օգ.—Առաւօտեան հանդարտ է։ Մոլոկանների թաղից մի կին եկաւ մեր տուն և պատմեց, թէ մոլոկանները խաբել են օսերին, թէ մեզ զէնք տուէք և մեզ օգնութեան եկէք. մենք ձեզ հետ ենք։ Եւ յետոյ իրանց օգնութեան եկողներին գընդակի տակ են տուել։ Սպանել են օսերի մեծին և բաւական նեղել նրանց։ Վերջը դիրքերը են բռնել և կանգնել իրար դէմ։ Հասարակ ժողովրդից կան շատ սպանվածներ, որովհետև մոլոկանները մէկը տեսնելուն պէս խփում են։ Երեկոյեան սկսվեց սոսկալի հրացանաձգութիւն, և կոզակները վերցրին հիւանդանոցը։ Մոլոկանների թաղում մեծ հրդեհ կար։ Գիշերը հանգիստ էր։

VII օր.

Երկուշաբթի, 12 օգ. Առաւօտ կոզակները հիւանդանոցն ու Գոսպիտալնայա փողոցը ինքնակամ թողին։ Բոլշևիկները սկսեցին առաջ գալ, կռիւը սաք կերպարանք ստացաւ և շարունակվեց մինչ երեկոյ։ Յետոյ կոզակները մի զրահապատ ատաժօքիլ ստացան, որը երեկոյեան գնաց Գոսպիտալնայա փողոց և տնաբեկելով բոլշևիկներին՝ փախցրեց նրանց։ Բոլշևիկները շատ սպանվածներ տուին։ Զրահապատը մեծ սարսափ է տարածել կարմիր գվարդիայի շարքերում։ Գիշերը Թալ հրացանաձգութիւն էր։ Այսօրվայ բիլլետնի մէջ կոզակների զինուորները հրամայում է վաղը բանալ պատերազմավայր չեղող տեղերի բոլոր խանութները և յորդորում էր ժողովրդին հանգիստ մնալ, խոստանալով շուտով կարգը վերահաստատել։

VIII օր.

Երեքշաբթի, 13 օգոստ.—Գիշերվայ ժամը 3 ին սոսկալի հմայազարկ էր։ Բոլշևիկները յարձակվել են։ Լսվում է նրանց «ուրռա» և նրան հետևող ահեղի համազարկերը։ Վերջը նրանց աջողվեց գրաւել իրանց հին դիրքերը, Գոսպիտալնայա փողոցը, հիւանդանոցն ու կայարանը։

Ամբողջ օրը տաք կռիւ է։ Կոզակներն ամեն կողմ խրամներ շինեցին և փողոցների մէջ տեղը գերաններ շարեցին։ Իրանց զրահապատը գերի էր ընկել բոլշևիկների ձեռքին, որովհետև բենզինի պակասութեան պատճառով կայարանն էր մնացել և բոլշևիկները կայարանի հետ վերցրել էին նաև զրահապատ ատաժօքիլը։ Գիշերը տաք կռիւ էր։

IX օր.

Չորեքշաբթի, 14 օգ.—Սոսկալի կրակ է. կրակում են թէ թնդանօթներից, թէ գնդացիրներից և թէ հրացաններից։ Կոզակները նորից վերցրին Գոսպիտալնայա փողոցը, բայց ետ եկան։ Մեծ հրդեհներ կան քաղաքի հիւսիսային կողմը։ Գիշերը հրացանաձգութիւն էր։

X օր.

Հինգշաբթի, 15 օգ.—Կոզակները քաշվեցին Մոսկովսկի խրամները։ Երէկ ցերեկը մոլոկանների թաղը հաշտութեան պատգամաւորութիւն գնաց օսերի կողմից։ այսօր օսերը ասում են, որ արդէն հաշտվել են մոլոկանների հետ և նրանք խոստացել են կռւել ինքնուշների դէմ։ Ցայսօրվայ բիլլետնի մէջ կոզակները ինքնուշներին հրաւիրում են հանդիստ մնալ և ժամանակել Թերեքի նահանգի ազատագրման և կառավարութեան գործին։ Երեկոյեան բոլշևիկները սկսեցին յարձակվել և փոթորկային համազարկեր տալ։ Շուտով երեսց նաև զրահապատ ատաժօքիլը, որը սարսափ առաջ բերեց կոզակների շարքերում, և նրանք նահանջեցին։ Բոլշևիկները վերցրին շաբը։ Քաղաքում 7—8 տեղ հրդեհ կար։ Գիշերը հրեատանին էր գործում երկու կողմից։

XI օր.

Ուրբաթ, 16 օգ.—Փոթորկալի հրացանաձգութիւն է ամբողջ օրը։ Մղվում է վճռական մարտ։ Ինդուշները յարձակվել են Թերեկի ստանիցայի վրա, և կոզակների մի մասը գնացել է նրանց դէմ։ Ուժը քիչ է։ Երեկոյեան կոզակները յարձակում գործ դրին, որը տեւեց մօտ 2 ժամ։ Ամբողջի հրաձգութիւն դեռ չէր եղել։ Սակայն եկաւ զրահապատը, և կոզակներն ու օսերը նահանջեցին։ Գիշերը հրաձգութիւն և հրետանու գործողութիւն էր։

XII օր.

Շաբաթ, 17 օգ.—Բոլշևիկները վերցրին քաղաքը։ Բոլորովին հանգիստ է։ Տեղ տեղ մէկ-մէկ թալ հրացանաձգութիւն կայ, այն էլ հեռու։ Օսերն ու կոզակները նահանջել են։

Կարմիր գվարդիականները նոր ոյժ էին ստացել Գրօզնայից։ Զը նայած որ կոզակները առաջ էին, թէ Բէսլանի օսերը քանդել են երկաթգծերը, սակայն բոլշևիկները տմտեղ իջել են վագոններից և գնացել Նարզան։ Այնտեղից նրանք վրա են տուել և թիկունքից հարձակվելով դուրս քշել կոզակներին ու օսերին։ Ինդուշները, որ օգ. 9 ից թողել քաշվել էին, այսօր նորից եկան, բոլշևիկների յաղթանակը տօնելու։ Բոլորովին հանգիստ է։

XIII օր.

Կիրակի, 18 օգ.—Բոլորովին հանգիստ։ Ժողովուրդը պանրի, հացի, գետնախնձորի և իւղի հերթի է կանգնել։ Գաղթականների կազարմաններում պատահել են սովամահութեան շատ դէպքեր։ Ժողովուրդն էլ օրերով քաղցած է մնացել։ Հաց չի ճարվում դեռ։ Բոլշևիկները պատում են կարմիր դրօշակաւոր ատաժօքիլներով փողոցներում։

Միւս օրից ինձ յանձնվեց մի փոքրիկ բնակարան՝ երեք մաքուր կահաւորված սենեակներից՝ իր բոլոր յարմարութիւններով, որոնց համար նախապէս մտածել էին ու պատրաստել մայրիկս ու Սուրէնը։ Եւ այդ օրից ես գոհունակութեամբ սկսեցի իմ ընտանեկան կեանքը, որ այսօր շարունակվում է ձեր աչքի առաջ։ Մեր ապաստանութեան լուրը՝ բնականաբար՝ հասաւ Կովկաս, և Սուրէնը նորից մի նամակ ստացաւ իր ծնողներից ու յայտարարվեց հայրական ժառանգութիւնից ընդմիշտ զրկված։ Բայց Սուրէնին չը սարսափեցրեց ժառանգութիւնից զրկվելու լուրը, որովհետև, ինչպէս ես ասացի, նա ունէր լաւ պաշտօն, արդէն ընդունված էր քաղաքում իրաւ լաւ ժանկական բժիշկ և դրա հետ միասին ես էլ երկու ծանօթ ընտանիքներում երաժշտութեան դասեր ունէի, որոնցից ստանում էի լաւ վարձատրութիւն։ ու ընդհանրապէս մենք ապրում էինք բաւականութեան մէջ։ Գուցէ դուք զարմանաք, թէ ինչու են պէտք այս մանրամասնութիւնները, մինչդեռ դուք ստացաք ինձանից ձեր տուած հարցի պատասխանը։ բայց ես պիտի ասեմ ձեզ, որ ես վաղուց նկատել եմ, որ դուք հետաքրքրվում էք իմ անցեալով՝ գլխաւորապէս իմ հիւանդութեան պատճառն իմանալու համար։ Ուստի ես գալիս եմ ձեզ օգնութեան, որպէս զի դուք սխալ եզրակացութեան չը գաք այդ հարցում։ Եւ այսպէս՝ Սուրէնն ու ես ապրում էինք ամենաբնդնիկ օրեր։ միշտ անվիշտ, անտարտունջ, միշտ ուրախ և զուարթ, ինչպէս վայել է երիտասարդ և առողջ ամուսիններին։ Վերջապէս ծնվեց մեր Զարէհը ու մեզ համար բերաւ մի նոր ուրախութիւն և երջանկութիւն... Բայց շուտով մի խորութիւն էլ հետևեց դրան. մայրիկս հիւանդացաւ։ Ցաւերանոցից բերինք նրան մեզ մօտ։ Ցաւերի մէջ տեսնելով